««ՄՈՒՇ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանական հասցե՝ ք.Գյումրի, 3102,
Տիգրան Մեծ 1, բն. 27
Գործունեության հասցե՝ ք. Գյումրի,
Մուշ-2 թաղամաս. թիվ 4/18
Հեռ. 094 823745, էլ. փոստ mush.dc.ngo@gmail.com

Ե-17/25
08.10.25թ

Գյումրու համայնքապետ
պարոն Վ. Ղուկասյանին
««Մուշ» Զարգացման Կենտրոն» ՀԿ
տնօրեն՝ Ա. Սահակյանից

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

««Մուշ» Զարգացման Կենտրոն» ՀԿ-ն Մուշ 2 թաղամասում միակ կազմակերպությունն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագիր թաղամասում բնակվող 110 երեխաների համար: 01.10.2015թ.-ին <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության, Գյումրու համայքապետարանի և ««Մուշ» Զարգացման Կենտրոն» ՀԿ-ի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում կենտրոնի աշխատանքները մինչ օրս անխափան իրականացվել են համայնքապետարանի կողմից հաստիքների տարեկան ֆինանսավորման, միջազգային կազմակերպությունների կողմից տարբեր ծրագրերի իրականացման արդյունքում:

Կենտրոնը հագեցած է գույքով, նյութատեխնիկական բազայով, իր միջոցներով և տարբեր ծրագրերի աջակցությամբ ապահովում է երեխաների սննդի կազմակերպումը, կոմունալ վճարումներն և այլ ծախսեր:

Կենտրոնի հետագա գործունեության շարունակականությունն ապահովելու համար, խնդրում եմ Ձեր աջակցությունը փոխըմբռնման հուշագրի ժամկետը երկարացնելու և հաստիքների տարեկան ֆինանսավորումը՝ 23.982.072(քսաներեք միլիոն ինը հարյուր ութսուներկու հազար յոթանասուներկու) դրամ տրամադրելու հարցում:

Արդյունքում կապահովվի կենտրոնի բնականոն գործունեությունն և երեխաների նախադպրոցական կրթություն ստանալու իրավունքը:

Հարգանքով՝

««Մուշ» զարգացման կենտրոն» ՀԿ տնօրեն՝ Աննա Սահակյան

ՀՀ ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՌԱՆՑԿԱԶՄ» Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ է 08.10.2025թ.
ԳՐԱՆՑՎԱԾ է N 15525